

դուրսիսներ, դժոխային գիւտեր, պատերազմներ ու զանազան կռիւներ: Մենք ատոնցմէ ոչ մէկը ունինք, որով լրագիր ալ չունինք: Ո՞րն է լաւը: Այդ օրինակ լուրեր չունենալով՝ լրագիր չունենա՞լը, թէ այդ խայտառակ լուրերը ունենալով՝ լրագիր ունենալը:

-Դուք ուր որ էք, հոն կեցած էք:

-Մենք ուր որ ենք, հոն կեցած ենք՝ տեսնելով, որ դուք ուր որ էք, հոն կը դառնաք:

Այս ալ չեղաւ: «Պետք է վերջապէս ջախջախեմ սա «վայրենի»ն», - մտածեցի:

-Մենք պատմութիւն ունինք, մինչդեռ դուք չունիք:

Պատմութիւնը անցեալի փորձառութենէն օգտուելու համար է: Երբ մարդ անդադար կը կրկնէ անցեալի սխալները ու բնաւ չօգտուիր փորձառութենէն՝ այն ժամանակ պատմութիւնը կը դառնայ հետաքրքրութիւն յագեցնելու աղբիւր մը: Մենք մեր հետաքրքրութիւնը կը յագեցնենք հրաշալի հեքեաթներով:

-Մենք անթերիներ չենք: Կը խոստովանինք մեր թերութիւնները, դուք, սակայն, ինչո՞ւ չէք խոստովանիր ձեր պակասութիւնները:

-Մենք պետք չունինք խոստովանանքի: Մեր ամէն տեղը բաց է, ինչպէս մեր հոգին: Դուք, սակայն, խոստովանելու էք ճիշդ ու ճիշդ... Մոսկուացի համայնավարի մը պէս:

-Անուրանալի է, սակայն, որ մենք շինողներ ենք:

-Ձեր քանդելու հանճարը կը գերազանցէ ձեր շինելու հանճարը: Ատկէ զատ՝ դուք կը շինէք ամէն բանին կեղծը: Շինած էք ոսկին կեղծը, մարգրիտին կեղծը, կտաւին կեղծը, մետաքսին կեղծը, գինիին կեղծը, կարագին կեղծը, հացին կեղծը: Դուք ուրիշ բանի մըն ալ կեղծը շինած էք՝ առանց անդրադառնալու:

-Ո՞րն է այդ բանը:

-Մարդը: Մարդուն կեղծն ալ շինած էք դուք, միլիոններով: Ձեր շինած կեղծ մարդուն բարեկամութիւնը կեղծ է, արդարութիւնը կեղծ է, ազատութիւնը կեղծ է, վարդապետութիւնները կեղծ են, սիրտը, միտքը, լեզուն ամբողջովին կեղծ են: Մենք՝ վայրենիներս, կը զարմանանք ձեր տաղանդին վրայ, սակայն, չենք կրնար զմայլիլ ու շնորհաւորել: Մենք իրերը ձգած ենք իրենց բնական վիճակին մէջ, քանզի